№ 2 ՇԱԲԱԹ 4 ՅՈՒՆՎԱՐԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴՐՎԱԾ ԴՐԻԴՈՐ ԱՐՔԵՐՈՒՆԻ

ՇԱԲԱԹ 4 ՅՈՒՆՎԱՐԻ № 2

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Բայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Բայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՆԵՐԿԱՅ 1914 Թ. ՀԱՄԱՐ

ԱՃ-ՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է

12 ի 11 ամիսը	10 ամիսը	9 ամիսը	8 ամիսը	7 ի 6 ամիսը	5 ամիսը	4 ամիսը	3 ամիսը	2 ամիսը
10 րուբ.	9 րուբ.	8 րուբ.	7 րուբ.	6 րուբ.	5 րուբ.	4 րուբ.	3 րուբ.	2 րուբ.

Յունվարի 1-ից մինչեւ փետրվարի 1-ը 85 կոպ.

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլար. Ուրօպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ.

Բայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով. Բայտարարութիւնների համար պիտի վճարել՝ առաջին երեսի վրա տողատեղին (պետիտ) 20 կ., վերջին երեսի վրա 10 կ.

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականով.

Հին բաժանորդներից խնդրվում է կպցնել փոխադրական բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով.

ՊՐԷՄԻԱՆԵՐ

«Մշակի» ՏԱՐԵԿԱՆ այն բաժանորդները, որոնք 1914 թ. համար (սկսած յունվարի 1-ից 1914 թ.) ՄԻԱՆՈՒԱԳ կամ ՄԱՍ-ՄԱՍ վճարած կունենան 10 րուբլի բաժանորդավճարը, կը առանձ ԶՐԻԱԲԱՐ հետեւեալ գրքերից ՄԷԿՆ ՈՒ ՄԷԿԸ.

1) Գր. Արծրունու աշխատութիւնները 1865—1871 թ.

Այդ գրքի մէջ զետեղված են Գր. Արծրունու այն խոշոր ու մանր յօդուածները, որոնք լոյս են տեսել մինչեւ «Մշակ» լրագրի հրատարակութիւնը: Գիրքը բաղկացած է 408 էջից: I և II

2) Վրթիի (Ա. Քալանթարի) Մանրանկարները, հատոր:

«Մանրանկարները» ամփոփում են իրանց մէջ հայկական հասարակական կեանքի և նրա արտայայտութիւնների նկարագրութիւնները: Գիրքը բաղկացած է 520+472 էջից:

Մինչեւ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ը բաժանորդագրվածները կը ստանան ԵՐԿՐՈՐԴ գիրքը, իսկ նրանից յետոյ բաժանորդագրվողները—ԱՌԱՋԻՆ գիրքը:

Արտասահմանեան բաժանորդները պէտք է ուղարկեն գրքերի ծանրապարհածախքը, որի քանակը կը յայտարարվի իր ժամանակին:

Մեր հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ". Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՏԱՏՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՍԱՐԳԻՍ ՀԱՒՆԱԶԱՐԵԱՆԸ ԻՐ ՁԱԻԿՆԵՐՈՎ յայտնում են իրանց շնորհակալութիւնը այն բոլոր բարեկամներին ու ծանօթներին, որոնք անձամբ, հեռագրերով կամ նամականով ցաւակցութիւն են յայտնել նրանց կրած ծանր կորստի, այն է՝ առաջնի քանգագին ամուսնու, իսկ վերջիններէ սիրելի մօր՝

ՆՈՒՆԷԻ

անժամանակ մահվան առիթով: 8. 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Շաբաթ, 18 յունվարի 1914 թ.

ՅՕԳՈՒՏ ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ կը կայանայ

XXIII «ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՅԹԸ»

I

Ասիական երաժշտական խումբը ղեկավարութեամբ Ս. Մագալովի կը նուագէ հայկական եղանակներ:

II

Ժողովրդական ազգային հանդէս-ուրախութիւն Թիւրքահայաստանի Մուշ քաղաքում մանակցութեամբ կովկասեան գաւառների և Թիւրքահայաստանի բազմաթիւ ներկայացուցիչների՝ ազգային տարազներով և յատուկ երաժշտութեամբ և երգեցողութեամբ:

III

Վիճակախաղ զուտ ասիական արծաթեայ իրերից և գործուածքներից:

IV

Ասիական և եւրօպական պարեր, Petit-chevaux, շամպայն, ծաղիկներ: Մուտքի տոմսակը արժէ 2 ր. 50 կ.: Վարժուհիների, ուսուցիչների և ուսանողների համար 1 ր. 25 կ.:

Սկիզբը երեկոյեան ժամը 9-ին:

Երեկոյթի կառավարչուհի՝ իշխանուհի Մ. Թումանեան

Կարգադրիչներ՝ տ. տ. իշխ. Ս. Արղութեան, Ե. Աֆրիկեան, Հ. Առաջամեան, Մ. Բօզաջեան, Ե. Գիւլալեան, Ե. Ղորդանեան, Ե. Ղուլեան, Վ. Մամուլեան, Մ. Ցարուխեանեան, Ս. Քալանթարեան, պ.պ. Ե. Թումանեան, Ե. Շահնազարեան, Տէր-Մարուքեան, Գ. Իփէկեան:

Գեղարուեստական բաժնի կառավարիչ՝ Գ. Բաշինջաղեան

առ. (10, 18) 3. 3—1

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

յայտնելով որ Նոր-Տարւայ և Ծննդեան տօների առիթով շնորհակալութեամբ ընդունում է աղքատների համար նուէրներ դրամով, մթերքներով և շորով, ամենայն օր ժամը 9-ից մինչեւ 2-ը, երեկ. ժամը 5-ից մինչեւ 7-ը Ընկերութեան գրասենեակում (Абасъ-Абадская площадь № 7), խնդրում է բարեսիրտ անձնաւորութիւններին օգնութեան հասնել այդ թշուառներին:

(առ.) 1235. 2—1

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

դահլիճում (Лермонтовская 1.)

շաբաթ, յունվ. 4-ին կայանալու է

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

հրապարակային նիստը, ուր դասախօսելու են հետեւեալ նիւթերի մասին.

Ե. Լալայեան

Քարէ դարը Հայաստանում ըստ իր պեղումների:

Պարիզի համալսարանի դոկտոր Մեսրոպ վ. Մաքսուտեան

Հայոց հնագոյն քաղաքակրթութիւնը ըստ հայ լեզուի:

Սկիզբը երեկ. ժամը 7½-ին:

Մուտքը հրաւիրագրերով է:

առ. 7. 1—1

ՀԱՐԿԱՒՈՐ Է

փոբձված

ՀԱՇՈՒԱՊԱՀ

Թիֆլիսից դուրս ծանկացողները դիմեն՝ Тифлисъ, Почтовый ящикъ № 182.

ԲԺԻՇԿ

Մ. Կ. ՄԱՐՈՒՔԵԱՆ

ՄԱՍՆԱԳԷՏ

Սիճիլիս, վեներական եւ կաշուի հիւանդութիւնները:

Սրսկումն «606»-ի և «914»-ի:

Ընդունելութիւն (առ. ժ. 1—2 / եր. ժ. 5—8

լիզաւետինսկայա փ. № 39. տ. Ջաղէթեանի:

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Այսօր, շաբաթ, յունվարի 4-ին

ԴԻՄԱԿԱՀԱՆԴԷՍ

Դիմակների համար տոմսակները արվում են անձամբ անդամներին և կանդիդատներին ժողովարանի գրասենեակում երեկոյեան ժամը 8—10-ը: Դիմակաւորված լինելը պարտաւորեցնում է մինչեւ գիշերվայ ժամը 12½-ը: Դիմակ չունեցող կանայք ստանք են վճարում 50-ական կոպ.:

Կը նուագեն զինտրական նրաժշտախումբը և սազանդարները:

Հիւրերը ըստ յանձնաբարութեան վճարում են մուտքի համար 1 րուբլի: Զգեստների ձեւը—պիտուրական՝ սովորական, ոչ-պաշտօնականների համար՝ սև զգեստ, պարտաւորեցնում է: Տեղացիները կարող են լինել ազգային տարազներով:

առ. 2. 1—1

ԲԺԻՇԿ

Ե. ՔԵՐԵՍՏԷՃԵԱՆ

ՆԵՐՔԻՆ և ՁՂԱՒԱԾԻ հիւանդութիւններ:

(Առանձին. կրծքի, ծոքաթաի և սրտի պակասութեան)

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՆՐԲ

Ամեն օր (Առաւտեան ժ. 12—2-ը / Երեկոյեան ժ. 5—7-ը

Խրախճայա, 3 (Լօրիս-Մելիքօվակայա փողոցի կողմից)

(հ.հ.կ.) առ. 774. 50—47

ԼՈՒՅՍ ՏԵՍԱԻ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Հանգուցեալ

Ա. Լ. ՔԱԼԱՆԹԱՐԻ

„Экономическія перспективы Восточной Анатоліи"

ԲՐՈՇԻՒՐԸ:

Գինն է է 25 կոպ.

Գնել ցանկացողները կարող են դիմել «Կենտրօնական», «Գուստաենբերգ», «Գիւր» գրավաճառանոցներին, ինչպէս և «Մշակի» խմբագրատանը:

(օ.մ.) առ. 1225. 10—3

Թէոլիցի հավատարմացի

ԲԺԻՇԿԱՊԵՏ

Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

Վերադառնալով արտասահմանից վերսկսեց ներքին հիւանդութիւնների ընդունելութիւնը. առանձնապէս կրծքի, թոքերի, թոքախտի և սրտի. բժշկութիւն նաեւ յատուկ ՏՈՒՐԲՈՒԼԻՆՆԵՐՈՎ, արհեստական ՊՆԵՎՄՕՏՕՐԱԿՈՒՄՈՎ: Թոքերի և սրտի քննութիւնը լաւագոյնով ՐԵՆՏԳԵՆՆԻՆ ՁԱՆԹԱԳՈՒՅՆԵՐՈՎ: Ամեն օր՝ 9—1 ժամ ցեր. և 5—7 ժ. երեկոյեան. ՀՔԱՐՕՐՆԵՐԻՆ ՈՒՌ. Ժ. 9—10 ՀՐՒ: Бебутовская 23, тел. 7—92.

(ա.օ.) առ. 977 100—51

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

ԲԱՐԶՐԱԳՈՅՆ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐ

I

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

Պետերբուրգ, 31 դեկտ.

ՈՂՈՐՄԱԾՈՒԹԵԱՄԲՌ ԱՍՏՈՒԾՈՑ ՄԵՆՔ, ՆԻԿՈԼԱՑ ԵՐԿՐՈՐԴ, ԿԱՑՍՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ՀԱՄԱՑՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ, ԹԱԳԱՒՈՐ ԼԵՀԱՍՏԱՆԻ, ՄԵԾ ԻՇԽԱՆ ՖԻՆԼԱՆԴԻԱՑԻ ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ, յայտարարում ենք ֆինլանդական մեծ իշխանութեան Մեր բոլոր հաւատարիմ հպատակներին, որ Մենք, հաստատված սէյմական կանոնադրութեան, բարւոք տեսանք հրամայել Ֆինլանդիայի սէյմին գումարվել Հելսինգֆօրս քաղաքում 1914 թ. յունվարի 20-ին (փետրվար 2):

Ուստի և սէյմի բոլոր պատգամաւորները պարտ են լինելու Հելսինգֆօրսում յիշեալ ժամանակ՝ նրանց վրա սէյմական կանոնադրութեամբ դրված պարտականութիւնները կատարելու համար:

Իսկականի վրա Ն. Կ. Մ. սեփական ձեռքով ստորագրված է՝

«ՆԻԿՕԼԱՑ»:

Ցարսկօյէ-Սէլօ, 31 դեկտ. 1913 թ.:

Ճշդեց՝ մինիստր առաջ-սեկրետար Վ. Մարիով:

II

Պետերբուրգ, 31 դեկտ.

Ողորմածութեամբն Աստուծոյ Մենք, Նիկոլայ Երկրորդ, կայսր և Ինքնակալ Համայն Ռուսաստանի, Թագաւոր Լեհաստանի, Մեծ Իշխան Ֆինլանդիացի եւ այլն, եւ այլն, եւ այլն, յայտարարում ենք այսու, որ Մենք բարւոք նկատեցինք բարձրագոյնս հրամայել Մեր ֆինլանդական գեն.-նահանգապետ գեն.-լեյտ. Զէյնին բանալ մեր անունից 1914 թ. յունվ. 20-ին գումարվելիք ֆինլանդական հերթական սէյմը, որի մասին այս հրամանը Մենք ստորագրում ենք Մեր սեփական ձեռքով.

Իսկականի վրա Ն. Կ. Մ. սեփական ձեռքով ստորագրված է՝

«ՆԻԿՕԼԱՑ»:

Ցարսկօյէ-Սէլօ, 31 դեկտ. 1913 թ.:

Ճշդեց՝ մինիստր առաջ-սեկրետար Վ. Մարիով:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Սեփական հեռագիր)

Սպահան, 3 յունվարի

Նոր-Տարու երեկոյեան ռուսահպատակ մի հայ Քէրամ անունով յարձակում գործեց ազգային առաջնորդարանի վրա:

Ոճրագործը ձերբակալված է ռուս. հիւպատոսարանում:

Եղնիկ վարդապետ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

31 դեկտ., 1 և 2 յունվարի

Ցարսկօյէ-Սէլօ.—Այսօր, ցերեկ. ժ. 3½-ին Մեծ պալատում շնորհաւորանք մատուցին Թագաւոր Կայսրին Պետ. Խորհրդի նախագահը, մինիստրները և գլխաւոր կառավարիչները նախագահի առաջնորդութեամբ, պալատի առաջին կարգի պաշտօնեաները, դիւանագիտական մարմինը:

Թագաւոր կայսրը պալատից մեկնեց ժամը 6-ին:

—

Պետերբուրգ.—Կայսերական հասարակական գրադարանում կայացաւ հանդիսաւոր նիստ՝ գոյութեան 100-ամեակի առիթով: Ներկայ էին հանդէսին մինիստրների խորհրդի նախագահը, ժող. լուս. մինիստրը, սենատօրներ, Պետական Խորհրդի և Դուման անդամներ, ակադեմիկոսներ և պրօֆեսօրներ: Մաղթանքից յետոյ ժող. լուս. մինիստրը կարդաց Բարձրագոյն հրովարտակի բնագիրը: Ընթերցումը ծածկվեց երկար ուրախ ու ազգային օրհներգի երգեցողութեամբ: Գրադարանի պատուաւոր անդամներ ընտրվեցին յօբելեանի առիթով ժող. լուս. մինիստրը, Պետական Խորհրդի անդամներ երմօլովը և Կալմիզինը, Մոսկվայի Հնագիտական Ընկ. նախագահուհի կոմսուհի Ուվարօվան, կոմս Շերեմետեվը, ակադեմիկոսներ Շախմատովը և Եագիչը, Կիէվի պրօֆ. Իկոննիկովը: Գրադարանը ողջ 1 ժամ 70 պատգամաւոր ստացել են մի քանի հազար շնորհաւորական հեռագիրներ արտասահմանից և պետութիւններից:

—

Կ. Պօլիս.—Բերլինում պաշտօնավարող դեսպան Մահմուդ-Մուխտար-փաշան հրաժարվեց ստանձնել Երզընկայի երրորդ զօրաբանակի հրամանատարի պաշտօնը, որի պատճառով էլ պաշտօնանկ եղաւ: Այդ պաշտօնին նշանակված է Ադրիանուպոլսի զօրաբանակի հրամանատար Հասան-Իզզէտ-փաշան:

—

Թէհրան.—Սպահան է մեկնում նոր նահանգապետ Սամսամ-ուս-Սալթանէն:

Սպասվում է ներքին գործերի մինիստր Էյն-ուդ-Դովլէի հրաժարականը: Ճշդրիտ տեղեկութիւնների համաձայն պետական խնամակալը նկատի ունի նշանակել այդ պաշտօնում Սիփէհդարին:

—

Պետերբուրգ. — Վերջին ժամանակ պարսիկ կառավարութիւնը, ասես, մի քանի էական միջոցներ ձեռք առաւ ապահովելու կարգ ու կանոնը երկրում առ հասարակ և Թէհրանում մասնաւորապէս: Ի նկատի ունենալով, որ, ինչպէս վկայում է Թէհրանի ռուսաց միսիան, կարգուկանոնը Թէհրանում կարող է համարվել անհամեմատ ապահովված, ռուսաց կառավարութիւնը, ներկայումս ժամանակին գրանելով յետ կանչել Ղազվինից ռուսաց զօրախմբի մեծ մասը, կարգադրել է վերադառնալ Ղազվինից ամբողջ զօրախումբը, թողնելով այնտեղ սոսկ 400 կոզակ բաշտում և կերպէրնուդում:

—

Հռոմ. — Զինուորական մինիստրութեանը թոյլատրվեց ծախսել (?) միլիոն՝ Լիվիան գրաւելու համար:

Դատական իշխանութիւնների և Բամպօլլայի ժառանգների ներկայացեալ վերջին կարդինալի քնակարանի վրա դրված կնիքը, որից յետոյ պետական քննիչը յայտնեց, որ կարդինալի կտակը կորչելու մասին ստացված բողոքի պատճառով նա պէտք է ձեռնարկէ քննութեան:

Աւստրիական լրագիրների հաղորդած այն տեղեկութիւնների առիթով, թէ իբր անգլիական քաղաքական շրջաններում ցանկութիւն է յայտնվում, որպէսզի Իտալիան անյապաղ հանէ իր զօրքերը կղզիներից և միայն դրանից յետոյ բարձրացնէ վարձահատուցման հարցը, «Տրիբունան» գրում է. «Մեզ յայտնի է, որ բրիտանական կառավարութիւնը այդ տեսակ ցանկութիւն չէ յայտնել, որպիսին հակառակ կը լինէր առողջ մտքին. Անգլիայի որպիսիցիոն արդարութեան և անգլօ-իտալական բարեկամութեան. Եթէ այդ տեսակ առաջարկութիւն էլ լինի, դա զրական հետեւանք չի ունենայ, որովհետեւ Իտալիան, պաշտպանվելով իր դաշնակիցներից, կարուկ կերպով կը մերժէ այդպիսի առաջարկութիւնը: Իտալիայից գրաւած կղզիները վերադարձնելու ժամանակն ու պայմանները—դա մի հարց է, որ վերաբերում է բացառապէս Իտալիային և Թիւրքիային»:

—

Աթէնք. — Թիւրքաց պարլամենտի նախկին պատգամաւոր Վամվակասը, որ այցելեց եւրօպական մայրաքաղաքները իբրև Մակեդոնիայի, Եպիրոսի և Արշիպելագոս կղզիների պատուիրակ, յայտնեց «Մեսաժէր դ'Աթէնէին» աշխատակցին, որ նա առանձնապէս զգացված է Ռուսաստանում իրան ցոյց տրված ընդունելութիւնից, ուր նա նկատեց համակրանք առ հելլէնիզմը:

—

Պարիզ.—Եկաւ Վենիզելոսը:

Բացվեց պարլամենտի հերթական նստաշրջանը:

Պատգամաւորների պալատի նախագահ ընտրվեց Դէշանէլը:

—

Պարիզ.—Եկամտային հարցի նախագծով ստացվելու է աւելի քան 190 միլիոն:

Պատգամաւորների պալատը ընտրեց փոխ-նախագահներ Էտիէնին, Դրօնին և Լէմիրին:

—

Խրիստիանիա.—Երէկ հանդէսով բացվեց ստօրտինգը: Գահական ճառում մատնանշվում է, որ Նօրվեգիայի յարաբերութիւնները արտասահմանեան մեծ պետութիւնների հետ բարեկամական են. Շպիցբերգենի դրութիւնը ճշտում է քանակցութիւնների առարկայ:

—

Լիսաբօն.—Գործադուլ արին երկաթուղային ծառայողները: Գնացքները երթեւեկում են դժուարութեամբ:

—

Վիէննա.—Բիւջետային մանաժողովում չեխ ազգայնները և արմատական-ները օբստրուկցիա արին ժամ. բիւջէի քննութեան դէմ: Նիստը սկսվեց դեկտ. 31-ին երեկոյեան: Չեխ ազգայն Ստանեկը խօսեց երեկ. ժամը 8-ից մինչեւ առ. ժամը 4-ը: Օբստրուկցիան տեւեց յունվարի 1-ի ամբողջ օրը և կարող է ձգձգվել մինչեւ վաղը, երբ բացվելու է պալատի նիստը:

—

Տօկիօ. — Սակուրաջիմի վրա չորս հրաբուխի գործելուց ապանվեցին աւելի քան 100 մարդ: Կղզին ատիճանաբար փլվում է: Կան բազմաթիւ զոհեր:

Կօգաջիմից բնակիչները փախչում են: Երկաթուղագիծը փչացած է:

—

Տօկիօ.—Սակուրաջիմի վրա հրաբուխների գործունէութիւնը շարունակվում է: Բնակիչները փախել են: Օգնութեան են փութացել ռազմանաւեր: Կօգաջիման կործանված է և պաշտպանվում է զօրքերով: Լավում է անվերջ ստորերկրեայ գոռոց, ամեն րոպէ երկրաշարժ է, գետինը շատ տեղերում լայն ճեղքուածներ է ստացել:

Մրացեալ Պետութիւնների պրեզիդէնտը եապօնական կառավարութեանը հեռագրով ցաւակցութիւն յայտնեց եապօնական հասած դժբաղդութեան առիթով:

Հրաբուխների կործանարար գործունէութիւնը Սակուրաջիմա կղզում շարունակվում է: Կղզին շատ տեղերում փոխել է իր մակարդակը: Ուղարկված է կրկին 3 նաւ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՊՈՍՏԱՐԿՉԻՆ

Ի. Պ. Գիրքը ընթերցողների ձեռքին հասնելուց հետո, ինչպես հայտնի է մեր ընթերցողներին, ստացանք մի շարք նամակներ, որոնցում հարցեր էին տրված գրքի վերաբերությամբ։ Ստորև մենք կտպագրենք այդ հարցերը և մեր պատասխանները։

Ա. Գ. Ք. Ա. Ն. Ա. Ն. Ի. Ն. Ա. Ն. Ի. Ն. Ա. Ն. Ի

ԿԱՐՄԻՐ ՂԱՆԿԱՐԱՆ

Գաղտնաժամ ՏՕՀԻ

I

Դժոխքի ներքին շրջանները մեզ ծանոթ են ամենայն մանրամասնությամբ։ Մենք գիտենք, թե ինչպես է ծնվում այդ սարսափելի վայրը, ինչպես է նա աճում, զարգանում, ինչպես է նա ընդունում իր մեջ ավելի ու ավելի շատ նոր զոհեր, ինչպես է նա ամեն օր ու ամեն ժամ ընդլայնում իր սահմանները, ինչպես է նա ամեն օր ու ամեն ժամ ավելի ու ավելի ահագին չափեր ստանում։ Մենք գիտենք, թե ինչպես է ծնվում այդ սարսափելի վայրը, ինչպես է նա աճում, զարգանում, ինչպես է նա ընդունում իր մեջ ավելի ու ավելի շատ նոր զոհեր

◆ Պետական Դուման այդամ Սկօբելէվը ձեռքի տակ բազմաթիւ փաստեր ունի Քուրթայիսի և Երևանի նահանգներում, ինչպէս և Շամախու գաւառում տիրող սովի մասին։ Պատգամաւորները դիմելու է Պետերբուրգում ուր հարկն է՝ շուտափոյթ օգնութիւն հասցնելու յիշեալ տեղերի սովեալ ազգաբնակութեան։

◆ Ժողովրդական Տանը գործող Հայկական Դրամատիկական Խմբակցութեան վարչութիւնը, ընդառաջ գնալով հասարակութեան ցանկութեան, որոշեց յունվարի 9-ին, հերթական ներկայացմանը, երկրորդ անգամ ներկայացնել «Անյայտ կին» պիէսը, որի առաջին ներկայացումը յունվարի 2-ին տ. Սիրանույշի և պ. Փափազեանի մասնակցութեամբ ունեցաւ շատ մեծ աջողութիւն։

◆ Թանդոյեան օրիորդաց դպրոցի վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել, որ նա շնորհակալութեամբ ստացաւ Ռուսհանութէս ընկերութեան 30 րուբլի ի յիշատակ իր հանգուցեալ եղբօր Գրիգորի, յօգուտ դպրոցական երգեցիկ խմբի։

◆ Անցեալ դեկտ. 28-ին Թիֆլիսի ժողովարանում կայացաւ «Լոյս» ընկերութեան կազմակերպած ասուցառը, որը անցաւ շատ աջող, թէ ծրագրի կատարելու և թէ մուտքի տեսակէտից։ Մանկական բաժինը համապատասխանում էր մանուկների հասկացողութեանը։ Հասարակութեան սիրալիր վերաբերմունքը դէպի երեկոյթը բարոյական մեծ վարձատրութիւն կարող է լինել ընկերութեան վարչութեան համար, որ իր ջանքերը գլխաւորապէս ուղղել է աղքատ մանուկներին դէպի լոյս առաջնորդելու գործին։

◆ Սաացանք 1) Արմաւիրից, Զ.-բէկ Բալուզեանից 10 ր., 1914 թ. «Մշակի» մի օրինակ ուղարկելու Արմաւիրի հայոց Ծխ. դպրոցին, 2) Թիֆլիսում, Կ. Ռավսէփեանից՝ 10 ր., մի օրինակ «Մշակ» ուղարկելու, ըստ սովորականին, Կորինեսպատ գիւղի դպրոցին, 3) Թիֆլիսում Հ. Եղիազեանից՝ 10 ր., մի օրինակ «Մշակ» ուղարկելու Դուսի դիւղի (Զէբրայիլի գաւ.) հայոց դպրոցին։

◆ Սաացանք յօգուտ աղքատների՝ 1) մի անյայտ տիկնոջից 5 րուբլի, 2) երեխաներ Գէորգ և Սարգիս Գօզալեանցներից 2 րուբլի, 3) Շուլաւերից Աբրաշէս Երիբէգեանից 3 րուբլի։ Այդ առիթով նորից յիշեցնում ենք կաբեկից անձանց չը մոռանալ այս ուղ օրերին չքաւոր և ժրջադդ ընտանիքներին։ Այցելութեան փոխարէն նուէրները կարելի է ուղղել խմբագրութեան։

◆ Այսօր նշանակված է պօլիտեխնիկումի գլխաւոր կոմիտէի տեխնիկական մասնաժողովի նիստը Լիժենէր Բօդուէսկիի մասնակցութեամբ։

◆ Թիֆլիսի առևտրական բանկը իր յատկացրած 30,000 րուբլին դրից պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքը պօլիտեխնիկումի գլխաւոր կոմիտէի անունով։

◆ Միջնորդութիւն է յարուցված նահանգապետի առաջ թոյլ տալու բանալ Թիֆլիսում բժշկական մասնաժի դպրոց։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԱՌԱ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Վրաց ակումբի աւազների խորհուրդը Վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկ. խորհրդին յանձնեց այն 1000 ր., որ խոստացված էր յիշեալ ակումբի աւազների խորհրդի կողմից վրաց կրթական վերոյիշեալ Ընկ. իբրև նպաստ։ Այս նպաստի կէսը Ընկ. խորհուրդը պիտի գործադրէ իր կրթիքների վրա, իսկ մնացեալ կէսը պիտի բաժանէ վրացի գրողներին։

◆ Ներկայ տարվայ յունվարից Թիֆլիսում կը սկսէ լոյս տեսնել վրացերէն լեզուով ամսօրեայ մի հանդէս «Զվեզնի Սիձվենէ» (Մեր հնութիւնը) անունով։ Հանդէսը խմբագրելու է կանանց բարձրագոյն դասընթացքների դասախօս Սարգիս Կակաբաձէն։

◆ Օդեսայի համալսարանի վրացի ուսանողների մի խումբ նպատակ է դրել ժամանակ առ ժամանակ լոյս ընծայել գրական-գիտական մի ամսագիր վրացերէն լեզուով, որին կաշխատակցեն վրաց նշանաւոր գրական ոյժերը։ Գրքի առաջին համարը լոյս կը տեսնի փետրվարին։

◆ Բաթումեանական վրացիները ներկայ տարվայ փետրվարին Դօնի վրայի Բաստով քաղաքում կը կազմակերպեն մի մեծ երեկոյթ, որից գոյացած արդիւնքը կը յատկացվի Արևմտեան Վրաստանի վնասված գիւղացիութեանը։

◆ Ազգով վրացի օպէրային երգիչ Մ. Նանօբաշվիլին (Միշէլ դ'Արբալ), որը ցայսօր երգում էր Նիցցայի օպերայի թատրոնում, այս յունվարից հրաւիրված է երգելու Բէլգիայի Բրիւսսէլ քաղաքի արքայական թատրոնում։

◆ Իլիա Ճավճավաձէի՝ վրաց մէջ Գրագիտութիւն Տարածող Ընկ. կատած տան բանկից յատ գնման օգտին ցայսօր մանաւոր անձերի և խմբագրութիւնների կողմից նուիրաբերված է դեռ մինչև 1790 ր.։ Նոյն նպատակով Ձիաթուրայի մարգտանց արդիւնաբերողների համաժողովը որոշեց յատկացնել 2000 ր.՝ յիշեալ արդիւնաբերողների մէջ բաժան կողմից, իսկ նոյն միութեան անդամների և ծառայողների ընդհանուր հանգանակվեց 270 ր.։

◆ Ձիաթուրայի մարգտանց արդիւնաբերողների համաժողովը որոշեց 2200 ր. յատկացնել Արևմտեան Վրաստանի վնասված գիւղացիութեան օգտին։

◆ Վրացերէնի թարգմանվել է Արցիբաշէվի «Ատանդ» պիէսը, որը մօտերս կը խաղացվի վրաց բեմի վրա։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Դեկտեմբերի 31-ին, իր բնակարանում, Րուժէյնի նրբանցքի № 4 տանը, յանկարծամահ եղաւ Սղնախի գ. բնակիչ Սիմէօն Զէյնալաշվիլին՝ 60 տարեկան։

◆ Նոյեմբերի 1-ին, երեկոյեան ժամը 7-ին, Գիւղագիտական հրապարակում, ե-բրևանի նահ. Գարգառ գիւղացի Տիգրան Սահակեանին և Թիֆլիսեցի Արշակ Թադեւոսեանի միջև, որոնք արբած էին, անձնական հաշիւների պատճառով վէճ ծագեց, որ փոխուեց ծեծ ու ջարդի, որի ժամանակ Սահակեանը գրպանի դանակով երկու վէրք հասցրեց Թադեւոսեանին։ Սահակեանը կալանաւորվեց ոստիկանի ձեռքով, իսկ վիրաւորվածին տարան Միքայէլեան հիւանդանոցը, ուր և թողնված է բուժվելու, որով հետև վէրքերը ծանր են։

◆ Թիֆլիսեցի Գէորգ Բալասանեանը յունվարի 1-ի առ. ժամը 9-ին մտնելով ախալցխացի Մաթեքս Գոլբօղլեանի բնակարանը (Ծարպուհում), որի 12 տարեկան աղջիկ Մարիամի հետ նա ծանօթ է մօտ 2 տարի, առաջարկեց Մարիամի հասակին առնելուն պէս տալ նրան իր կնութեան, բայց երբ Մարիամը, ինչպէս և նրա ծնողները կտրուկ կերպով այդ մերժեցին, նա՝ Բալասանեանը սկզբից պատրաստված դանակով խփեց Մարիամին փորից, որից յետոյ դուրս վազեց բնակարանից և ճանապարհին հէնց այնտեղ և եթ մինչդեռ դանակով խըփեց Մարիամի մօրը՝ Եղիսաբէին մէջքից։ Հնակարանում գտնվող վիրաւորվածների հայրը և ամուսինը կարողացաւ բռնել Բալասանեանին և խլել նրա ձեռքի դանակը, բայց պահել իրան Բալասանեանին չը կարողացաւ։ Վերջինիս Սուրբ-Սարգսի վերելքում բռնեց քաղաքապահ ոստիկանը և տարաւ ոստիկանատուն, ուր նա խոստովանեց ամեն ինչ։ Վիրաւորներին տարել են Մարիամի հիւանդանոց, ուր Մարիամի վէրքերը դեռ որոշված չեն, իսկ նրա մօր վէրքերը թեթև են նկատված։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Օպէրա

Յունվարի 2-ին, երեկոյեան, Աբգուսական թատրոնում օպէրային խումբը խաղաց սովորական աջող ներկայութիւնով «Հուգենօտները»։

Այս անգամ նուագութիւն կազմում էր Գրիգորեանի հանդէս գալը Բաուլի դերում, որ աջող կատարում է Լազարեվը։

Այդ երեկոյ Գրիգորեանն զգում էր իրան ախոր։ այդ հանգամանքը, նաև ի նկատի ունենալով որ արտիստը այդ պատասխանատու դերում հանդէս էր գալիս առաջին անգամ, պէտք է փոքր ինչ անվստահութիւն ներշնչէին նրա խաղի ու երգի մէջ։ Բայց և այնպէս արտիստը շնորհիւ իր բնական ձիրքի, հոյակապ ձայնի և դերասանական արտաքին ձևերի, կարող եղաւ պատուով դուրս գալ իր փորձութիւնից։

Արտիստը անշուշտ ուշք զարձնելու է ռիթմի հաւասարակշռութեան ու շնչառութիւնը կանոնաւորելու վրա, որով նա, ինչպէս սկզբունից ենք մենք յայտնել, կը դառնայ ներկայ օպէրային ընտանիքի մէջ առաջնակարգ այժ։

Բաւլի աջող կատարողների թւում աւելացնում է այդպիսով և Գրիգորեանին, որի ամպլուայի մէջ է մանում նաև «Հրէուհի» օպէրայի մէջ Ռաքիլի հօր դերը։

Իվ. Պալիեվը տաղանդաւոր կերպով զեկավարում է օրկէստրը։

Առանձնապէս պէտք է շեշտել այս տարվայ օպէրային ներկայացումների բեմադրական մասի օրինակելի լինելը։ Ե.

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Իլիոդորը ամուսնացել է իր երկրպագուներից մէկի՝ դերձակուհի Գերֆիլէվայի հետ։

◆ «Вечъ. Вр.»-ին հեռագրում են Հէլսինգֆորսից. «Եակօբստադից հաղորդում են, որ այնտեղ մի գործաւորուհի բանւոր կարիքից ստիպված տպանեց իր շանը, որպէսզի կերակրէ իր ընտանիքին»...

◆ Պարիզում հրդեհը կօլեժ-դէ-Ֆրանսի մէջ լափեց մի քանի լաբօրատորիաներ։ Շինութիւնը աշողկց կրակից փրկել։

◆ Պետերբուրգի պարսից դեսպանատունը հերքում է այն տեղեկութիւնները, թէ իբր բանտարկները ասստիկ գրգռված են ընդդէմ կառավարութեան և թէ իբր նրանք մտադիր են արշաւանք գործել դէպի Թէհրան։

◆ Երևանից հեռագրում են, որ այնտեղ ստացված տեղեկութիւնների համաձայն, Կովկասին սահմանակից շրջանների քիւրդերը շտապով զինվում են։

◆ Թիւրքիան շարունակում է զօրքեր ուղարկել դէպի Կովկասի սահմանները։ Օֆիցէրների թւում քիչ չեն գերմանացիները։

◆ Զէյթունի-Բուրնուի փամփուշտի գործարանը բաւականին ընդլայնված է։ Վճռված է ամեն օր մի միլիոն փամփուշտ պատրաստել թիւրք զօրքերի համար։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

31 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Պետական Խորհրդի նախագահ 1914 թ. նշանակվեց Ակիմօվը, փոխնախագահ՝ Գօլուբեվ։

Հրամայված է սենատում ներկայ լինել Թիֆլիսի գատաստանական պալատի գատախազ Սիլինին։

Ծովային մինիստր Գրիգօրովիչը գառնում է Պետ. Խորհրդի անդամ՝ թողնելով իր պաշտօնում։

Պարգևատրվում է Անյայտ երկրորդ աստիճանի շքանշանով Թիֆլիսի նահանգական դատարանի դատախազ Գրօմօվը։

Ի. գ. լ. է դառնում Պետերբուրգի դատապալատի դատախազի օգնական Վիտալէրը։

Առևարի մինիստրութիւնը մինիստրների խորհրդին օրինագծեր ներկայացրեց հիմնելու Սամարայում պօլիտեխնիկական ինստիտուտ գիւղատնտեսական ու առևտրա-ամտեսական ֆակուլտէտներով, և նկատելի բնութագրում հանքային ինստիտուտ։

Պարգևատրվում է 1-ին կարգի Անյայտ շքանշանով Թիֆլիսի դատ. պալատի դատախազ Սիլինը։

ՍԱՆՏ-ԵՒԱԳՕ։ Զինուորական օդապնաց Մէրին ընկաւ 300 մետր բարձրութիւնից և մահացաւ։

1 յունվար

ՆՕՎԳՕՐՕԴ։ Շիտավի Թղթի գործարանում հրդեհին վոհ գնացին երկք երեխայ։

ՔԻՇԻՆԵՎ։ Բեսարաբիայում տիրող ձիւնախառն փոթորիկը մեծ վնասներ է հասցրել հան գրատարած հոգեներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Լոյս տեսաւ «Голосъ Руси» առաջին համարը։

2 յունվար

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ծանկարծամահ եղաւ ակադեմիկոս երկրաբան Ֆէօդոսի Հէրնիշևը։

Թագաւոր Կայսրը ընդունեց առաջին մօնգօլական մինիստր Սահնօյինսկինին։

Թիֆլիսի դատ. պալատի աւագ նախագահ Լազարեվը անհետաձգելի գործերով հրամայված է ներկայ լինել սենատում. Տաշկէնտի դատ. պալատի աւագ նախագահ Զէբրիովը նշանակվում է Թիֆլիսի դատաստ. պալատի աւագ նախագահ։

ԱՄՏՐԱՀԱՆ։ Գաւառում կրկին երևացել է ժանտախտ։ Ուղարկված են բժիշկներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Հաղարկու տոմսերի տիրաժը։ Երկու հարիւր հազար ր.—սերիա 19,830, № 50.

Եօթանասունհինգ հազար ր.—8702/3.

Քառասուն հազար ր.—2291/39.

Քսան և հինգ հազար ր.—5933/1

Տասն հազար ր.—16575/34, 16,233/34, 13,005/41.

Ութ հազար ր.—1864/44, 16,844/9, 5953/9 18,115/31.

Հինգ հազար ր.,—9009/43, 765/5, 19,489/16, 3707/8, 19,862/31, 16,143/35, 14,499/2, 14,161/15.

Մի հազար ր.—3601/28, 3744/19, 8630/46, 10,844/23, 2401/6, 2099/31, 5863/28, 2182/44, 15,346/18, 5478/39, 7314/40, 13,428/14, 17,100/39, 1702/3, 6327/9, 12,653/18, 7900/44, 16,545/12, 6730/39, 14,183/50.

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժիշկ. Բ. Ղաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Ջօրնցօվի արձանի հանդէպ)

Սմեճ or, բացի կիրակի օրերից

606»-ի եւ «914»-ի ներարկ ում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ս. ՆԱՒՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վէներական (սիֆիլիս) հիւանդութիւն։

Բ. Գ. ՕՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւանդութ.։

Զ. Ի. ԲԱՐԱՆՆՍՏԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։

Մ. Մ. ԲՆՆԱՄՕՎԱ2—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութ.։

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մոքթու, վէներական, վիրաբուժութեան և միզասեռ. հիւ.։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծնակատար.։

ԿԻՆ ԲԺԻՇԻ ՅԱՐ-ԳԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ՆԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։

Վճարը 50 կ.։ Զրաւորները ձրիւ։ Համախորհրդի (Հօնսիլիում) և օպերացիայի համար առանձին։

Հրատարակութեան վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Ղաւասարդեան

1. *0 - 109*

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏՆԵՐ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

L. SOLUSOJI հետեւեալ երկերը.

1) ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ, թարգմ. Սուբլաթեանի . . . . . 30 կ.

2) ԿՈՆՖՈՒՑԻՈՄ (Զինական խմաստունը), խմբագրութեամբ Լ. Ն. Տօլստոյի, կազմից Ա. Բուլանժէ, թարգմ. Սուբլաթեանի . . . . . 7 կ.

3) ԱՍԱՑՈՒԱԾՆԵՐ ՄԱՀՕՄԻԴԻ, ընտրված Լ. Տօլստոյից, թարգ. Լ. Դանիէլեանի . . . . . 5 կ.

4) ՔՈՑՐԵՐԸ, թարգ. Դանիէլեանի . 5 կ.

5) ԻՆՉՈՎ ԵՆ ԿԵՆԴԱՆԻ ՄԱՐԴԻԿ, թարգմ. Լ. Դանիէլեանի . . . 10 կ.

Նրանք, որոնք այս գրքերից մէ-մի օրինակը պահանջեն մեզանից փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 10 % զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերստիր վճարով պահանջողներին զեղչ չի լինի։

Հասցէն՝ Ред. газ. «Мшакъ», Тифлисъ.

(3) *10—4*

ՇԱՄԱԽՈՒ հայոց Ծխ. դպրոցի համար հարկաւոր է **ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ** կամ **ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ**

24 դասով։ Մինչև տարվայ վերջը 275 ր. ռուբլով։ Հեռագրով դիմել հոգաբարձութեան։

4. *3—1*

Լոյս տեսաւ

„ԱՇՈՏ ԵՐԿԱԹ“

Ա Ց Վ Ա Ձ Ե Ա Ն Ի

Գինն է պօստի ծախքով 1 ր. 20 կ.

Հրատարակութիւն «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» վաճառանոցի։

6. *2—1*

Լոյս է տեսել

ԵՐԳԵՑՈՂ. ՀԱՑԱՍՏԱՆ. ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ

բազմաձայն մշակմամբ Ռ. Գ.

ՊԱՏԱՐԱԳ (ՅՈՐԴՈՐ)

Քառաձայն խառն և միասեռ խմբերի համար։ Նախապատրաստական աճխատութիւն գլխաւոր հրատարակութեամբ։

Պատարագը երգողական երկ և միատոդ նօտագրութեամբ ընդարձակ առաջաբանով-նախագիտելիքով . . . 1 ր. 25 կ.

Պահեստը՝ Москва, Ноглинн. пр. 14. Муз. Торг. «Н. Юргенсонъ».

(нот.) *1217.* *4—2*

Առևտր. դպրոց (ԻՐԱՒՈՒՆՔՈՎ) **և ՅՈՎՀԱՆՆԷՍ ՋԱՔ.**

Հաշուապահական կուրսեր ՏԻՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

Ընդունութիւնը և զրամուդների սկիզբը գործում յունվ. 8-ից—առ. ժամը 8½-ից սկսած ցեր. ժ. 2-ը. իսկ կուրսերում՝ յունվ. 15-ից—առաջին խմբի հետ՝ ժամը 2½-ից մինչև 5-ը երեկ., երկրորդ խմբի հետ՝ ժ. 7½-ից մինչև 10-ը երեկ.։ Վաճառվում են դասագրքեր՝ ՍՈՒՐԲԼՈՒ ՀՋԱՅԱՊԱՏՈՒԹԻՒՆԸ ԱՒՏՈՒՏ ՈՒ-(ս. մ.) ՍՈՒՐԲ-ԽԱՉ։ Միխայլովսկի պր. № 17. 1213. 10—4

Ս.-Պետերբուրգի Պետական Կօնսերվատորիայի Դեղարուեստական Խորհրդի

ԴՐՕՒԱԳՄԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ

Հայ դպրոցների III (երկրորդ կիսամեակից) և IV բաժանմունքների

ԵՐԳ-ՉՇՆԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ

Առաջարկում ենք մեր նոր լոյս տեսած

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՅԲՒԲԵՆԱՐԱՆԸ

Ա. մաս՝ դիատօնիզմ. — *Գինը 35 կօպ.*

Դիմել բոլոր գրավաճառներին։ Պահեստը «ԳԻՐ» գրախանութի։

1182. *7—6* *(ն. շ.)* *Ռոմանոս Մելիքեան, Ազատ Մանուկեան*

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

ԹԻՖԼԻՍ, ԴԱՎՐՅՕՎԱՑԻ ՓՈՂՈՑ, ՏԵԼԵՖՕՆ 2—83.

ԸՆՏԻՐ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ԿԷՐՕՍԻՆԻ ԼԱՄՊԱՆԵՐ ԹԷ ԽՈՀԱՆՈՑԻՆ ԵՒ ԹԷ ՎԱՌԱՐԱՆՆԵՐԻ

ԿԷՐՕՍԻՆՕ-ԿԱԼԻԼ ԼԱՊՏԵՐՆԵՐ

(II 2.) *957.* *0—6*

Առևտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող

Տ. Մ. ՓԻՈՅԵԱՆԻ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ

Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/2. Տէլէֆօն № 976.

Տալիս են երեսո անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։

Դասընթացքն աւարտողներին տրվում են աւտեստատներ։

Դարձեալ զրամուդքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և արիզի Pigier գպրոցների ձեւով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նրանցն առնվում են ըէալ կեանքից։ Առագաները ևն. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և դրծարարական). 2) Առևտրական թղթակցութիւն. 3) Քաղաքացիտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնագրութիւն). 5) Առևտրական ենթակայութիւն. 6) Թուաբանութիւն վերջին վրա. 7) Վաճառագրութիւն, (ամենակատ ձեռքի ուղղումն), արագագրութիւն. բ.) աշխատատեղիի վրա. 8) Տնտեսագրութիւն, (ամենակատ և ուր.) և 4) Առևտր. դեր. 1) **Օտար լեզուներ.** 2) Տպագրութիւն. 3) Դակտիլոգրաֆիա (բամենագոն և ուր.) և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զրամուդքները կատարվում են և դաս-դաս։ Ունկնդիրների թէ թղթակցութիւն օտար լեզուներով։ Զրամուդքները կատարվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարազգիների պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարազգիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին։ Խոհերների ընդունութիւնը առ. ժամը 10—12-ը և երկ. 4—7-ը։ Ծրագիրը և դասընթացքների վրա։ Խոհերները ընդունվում են առ. ժամը 10—12-ը և երկ. 4—7-ը։ Ծրագիրը և դասընթացքների վրա։ Խոհերները պիտի վճարեն 15-ին։ Խոհերների ընդունութիւնը